14.12.23թ.

ք. Վանաձոր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի նիստի

Մասնակցում էին՝

Հովհաննես Ավետիսյան(Լոռու մարզպետի տեղակալ, Աշխատանքային խմբի ղեկավար)

Հեղինե Հալիվորյան(Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ)

Աննա Գասպարյան(Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ)

Արփինե Մատինյան(Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի անդամ)

Վալերի Ջաղինյան- (Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի անդամ)

Արբակ Սարգսյան(«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ, Աշխատանքային խմբի անդամ)

Սյուզան Հովսեփյան (ՀԿ կենտրոն, Աշխատանքային խմբի անդամ)

Էմիլիա Մարտիրոսյան(«Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, Աշխատանքային խմբի անդամ)

Նարինե Ղազարյան – («Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վանաձորի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի համակարգող, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ նախագահ, Աշխատանքային խմբի անդամ)

Լիլիա Աբրահամյան – (Քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակ, Աշխատանքային խմբի անդամ)

Սերինե Սերոբյան- Լոռու մարզպետի աշխատակազմի լրագրող

Ռոբերտ Սահակյան- Լոռու մարզպետի տեղակալի օգնական

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Մարզպետարանի և հասարակական կազմակերպությունների, այլ պատկան կառույցների կողմից ԼՂՀ բռնի տեղահանված քաղաքացիներին աջակցելու նպատակով իրականացված աշխատանքների մասին:

(զեկ. Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան, աշխատանքային խմբի անդամներ)

2. «Լոռու մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխօգնության աշխատանքային խմբի» գործունեության մասին (զեկ. աշխատանքային խմբի անդամ, մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վալերի Ջաղինյան):

3. Այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

1. Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյանը, Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Հեղինե Հալիվորյանը, Լիլիա Աբրահամյանը, Նարինե Ղազարյանը ներկայացրեցին ԼՂՀ բռնի տեղահանված քաղաքացիներին աջակցելու նպատակով իրականացված պետական

աջակցությամբ և մասնավոր կառույցների կողմից իրականացված աշխատանքները:

2. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վալերի Ջաղինյանը ներկայացրեց «Լոռու մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխօգնության աշխատանքային խմբի» գործունեությունը՝ առաջարկելով տեղեկատվությունը տարածել թիրախային խմբերի շրջանում և հնարավորության դեպքում ներգրավվել նոր խմբերի ձևավորման գործընթացում:

ՈՐՈՇՎԵՑ

1. Ըստ անհրաժեշտության, ԼՂՀ-ից բռնի տեղահանված բնակչությանն աջակցելու հարցերում ակտիվորեն համագործակցել միմյանց հետ, ռեսուրսներն ուղղորդել՝ ըստ կարիքների առաջնահերթության:

2. Հնարավորության դեպքում ներգրավվել «Լոռու մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխօգնության աշխատանքային» նոր խմբերի ձևավորման գործում և տեղեկատվությունը տարածել թիրախային խմբերի շրջանում:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**